Կարգապահական գործ թիվ ԿԳ-25088

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՍՄԻԿ ԵՂՆԻԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, մասնակցությամբ Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Հասմիկ Մարտիրոսյանի և նրա ներկայացուցիչ Հռիփսիմե Գալստյանի, դիմող Վահե Ասլանյանի և նրա ներկայացուցիչ Ռաֆայել Ջհանգիրյանի,

քննության առնելով փաստաբան Հասմիկ Եղնիկի Մարտիրոսյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1484) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը, Դիմողի համառոտ դիրքորոշումը.</u>**

Վահե Ասլանյանը **(այսուհետ՝ նաև Դիմող),** դիմելով Պալատ, հայտնել է, որ Արծվիկ Մկրտչյանը դիմել է դատարան ընդդեմ Լյուդմիլա Դավիդովայի և Դիմողի՝ նվիրատվության պայմանագիրն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով, ինչի առթիվ ձևավորվել է ԵԴ/22465/02/22 քաղաքացիական գործը:

Նշվածով պայմանավորված դիմել է փաստաբանական օգնության և «ՈՒԼՊԻԱՆՈՍ» ՍՊԸ-ի՝ ի դեմս փաստաբան Հասմիկ Մարտիրոսյանի հետ կնքել է պայմանագիր՝ վերոնշյալ գործով իրավաբանական օգնություն ստանալու նպատակով:

Թիվ ԿԳ-25088-2-Ա
11.02.2026թ.

Հայտնել է, որ մինչ վերոնշյալ գործով նախնական դատական նիստի ավարտը իրեն հայտնի է դարձել, որ իր դեմ հայցը ներկայացվել է հայցային վաղեմության ժամկետի խախտմամբ, ինչի մասին ինքը հայտնել է Փաստաբանին և, վստահելով նրա մասնագիտական պատրաստվածությանը, այլևս այդ առումով առանձնակի հետաքրքրություն չի ցուցաբերել և չի խառնվել իր հանձնարարությունը կատարված լինելու գործին, սակայն հետագայում պարզվել է, որ Փաստաբանը համապատասխան դատավարական փուլում՝ մինչև 2025 թվականի մայիսի 26-ը, նշվածի կապակցությամբ միջնորդություն չի ներկայացրել դատարանին, ինչը հանգեցրել է նրան, որ ինքը՝ որպես պատասխանող, համապատասխան ժամկետները սպառվելու պատճառով զրկվել է համապատասխան միջնորդություն ներկայացնելու, նշված հիմքով հայցի մերժման հնարավոր ելքով դատական ակտ ստանալու հնարավորությունից:

Ըստ Դիմողի՝ Փաստաբանը պարտավոր էր դատավարական համապատասխան փուլում ներկայացնել հայցային վաղեմության կիրառման միջնորդություն, ինչը չի կատարել ու դրանով թույլ է տվել կարգապահական խախտում:

Վերոգրյալի մասին հայտնելով, փաստաբանի վարքագծի կանոնագրքից և այլ աղբյուրներից մեջբերումներ ու դրանց հիմամբ վերլուծություններ, դատողություններ ու հետևություններ կատարելով՝ Դիմողը խնդրել է Փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և վերջինիս ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Դիմողին 2025 թվականի դեկտեմբերի 09-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ: Նշված գրությանն ի պատասխան՝ Դիմողը ներկայացրել է ապացույցներ ու դիրքորոշում՝ ըստ էության նաև պնդելով սկզբնապես արտահայտված իր տեսակետը:

Հանձնաժողովի նիստ(եր)ին Դիմողը մասնակցել է ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով և պնդել է դիմումը:

Միաժամանակ, դիմող կողմը, նիստի ընթացքում պատասխանելով Հանձնաժողովի անդամ Միքայել Դանիելյանի ճշգրտող հարցին, նշել է, որ ենթադրյալ խախտման առումով իր կողմից սկզբնապես նշված ամսաթիվը՝ 2025 թվականի մայիսի 26-ը, սխալ է, փոխարենը՝ ճշգրտել է, որ ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել 2025 թվականի փետրվարի 25-ին:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Դիմողի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը նախքան կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը ներկայացրել է բացատրություն, որով վիճարկել է ու հերքել իր կողմից կարգապահական խախտում թույլ տրվելու հանգամանքը՝ պնդելով, որ պատշաճ ու բարեխղճորեն կատարել է իր պարտականությունները:

Փաստաբանը նշել է, որ իր տիրապետման ներքո չի ունեցել հայցային վաղեմության ժամկետի խախտումը հաստատող ապացույցներ, որպիսիք ձեռք բերելու ուղղությամբ կատարել է նաև գործողություններ, մասնավորապես՝ դիմել է ՀՀ կադաստրի կոմիտե, ստացել և ուսումնասիրել վեճի առարկա գույքի կադաստրային գործի նյութերը, ինչի արդյունքում չի հայտնաբերել հայցային վաղեմության ժամկետի խախտումը հաստատող որևէ նյութ, որպիսի պայմաններում անհրաժեշտ ու նպատակահարմար չի գտել ներկայացնել հայցային վաղեմության կիրառման միջնորդություն՝ համարելով, որ այդպիսի միջնորդությունը հիմնավորող, անհրաժեշտ փաստերը հաստատող նյութերի բացակայության պայմաններում նմանատիպ միջնորդության ներկայացումն անհեռանկարային է, մարտավարական տեսանկյունից՝ ոչ ճիշտ:

Փաստաբանն ընդգծել է նաև, որ գործի քննությանն իր մասնակցությունը Դիմողի նախաձեռնությամբ դադարեցվել է նախքան առաջին ատյանի դատարանում գործի քննության ավարտը, որպիսի պայմաններում, Փաստաբանի գնահատմամբ, անհնարին է քննարկել չավարտված վարույթի կոնկրետ փուլի դրությամբ իր կողմից դատավարական որևէ գործողության չիրականացման իրավաչափությունը՝ հատկապես, որ չի բացառվում՝ գործի քննությանն իր հետագա մասնակցության դեպքում ինքը մեկ այլ դատավարական փուլում, եթե ի հայտ գային անհրաժեշտ ապացույցներ, կատարեր խնդրո առարկա գործողությունը՝ ժամկետի մասով հանդես գալով նաև համապատասխան միջնորդությամբ:

Նշվածի ու այլ դատողությունների հիմամբ Փաստաբանը գտել է, որ կարգապահական խախտում թույլ չի տվել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթը հարուցվելուց հետո, կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ Փաստաբանին 2025 թվականի դեկտեմբերի 09-ի «Պահանջ» վերտառությամբ փաստաթղթով առաջարկվել է այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ: Նշված գրությանն ի պատասխան՝ Փաստաբանը ներկայացրել է ապացույցներ ու դիրքորոշում՝ ըստ էության նաև պնդելով սկզբնապես արտահայտված իր տեսակետը:

Հանձնաժողովի նիստ(եր)ին Փաստաբանը մասնակցել և ըստ էության պնդել է գրավոր փաստաթղթերով ներկայացված իր դիրքորոշումը:

Միաժամանակ, Փաստաբանը նիստի ընթացքում պատասխանելով Հանձնաժողովի անդամ Միքայել Դանիելյանի հարցին՝ նշել է, որ համաձայն է սույն կարգապահական վարույթի կարճմանը՝ վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 2025 թվականի նոյեմբերի 07-ի թիվ 315-Ա/ԿԳ-25088 որոշմամբ Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանության մասին օրենքի» **(այսուհետ՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված

փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.1 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործի նախապատրաստումը 2025 թվականի նոյեմբերի 11-ին հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Ծովինար Քուրքչյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 2026 թվականի հունվարի 09-ին կազմել է եզրակացություն, որում շարադրվել են կարգապահական գործի կողմերի դիրքորոշումները, գործում առկա նյութերի ցանկը և էական այլ տվյալներ: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-4-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 2026 թվականի հունվարի 09-ին, այնուհետև Հանձնաժողովի նախագահի 2026 թվականի հունվարի 12-ի թիվ ԿԳ-25088-1-Ա որոշմամբ ընդունվել է Հանձնաժողովի վարույթ:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 2026 թվականի փետրվարի 11-ի ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը թիվ ԵԴ/22465/02/22 քաղաքացիական գործով, որում Դիմողը հանդիսացել է պատասխանող: ***Տվյալ փաստը հաստատվում է վարույթում առկա պայմանագրի պատճենով, կողմերի բացատրություններով, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:***

2. Թիվ ԵԴ/22465/02/22 քաղաքացիական գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացվել է 2025 թվականի փետրվարի 25-ին: ***Տվյալ փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:***

3. Փաստաբանը թիվ ԵԴ/22465/02/22 քաղաքացիական գործին իր մասնակցության ժամանակահատվածում չի ներկայացրել հայցային վաղեմության կիրառման միջնորդություն: ***Տվյալ փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:***

4. Փաստաբանը թիվ ԵԴ/22465/02/22 քաղաքացիական գործով Դիմողի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը հնարավորություն չի ունեցել իրականացնել մինչև առաջին ատյանի դատարանում գործի քննության ավարտը, այլ

նրա ներկայացուցչությունը դադարեցվել է՝ մինչև առաջին ատյանի դատարանում վերոնշյալ գործի քննության ավարտը: ***Տվյալ փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:***

5. Փաստաբանը կարգապահական վարույթի նիստի ընթացքում հայտնել է իր համաձայնությունը, որպեսզի սույն կարգապահական վարույթը կարճվի վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

6. Դիմող կողմը կարգապահական վարույթի նիստի ընթացքում հայտնել է, որ Փաստաբանի ենթադրյալ կարգապահական խախտման թույլ տրվելու օրը 2025 թվականի փետրվարի 25-ն է, բայց իր կարծիքով՝ վաղեմության ժամկետը սույն կարգապահական վարույթով չի լրացել, սակայն այդպիսի տեսակետի հիմքերն ու հիմնավորումները, չնայած այդ մասով իրեն ուղղված հարցին, Դիմող կողմը Հանձնաժողովի առջև չի բացահայտել:

7. Դիմողը Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Պալատին դիմել է 2025 թվականի հոկտեմբերի 09-ին, ինչի հիման վրա սույն կարգապահական վարույթը հարուցվել է 2025 թվականի նոյեմբերի 07-ին:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանողը փաստաբան է հանդիսանում 2012 թվականի հուլիսի 14-ից և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ պայմանավորված վաղեմության ժամկետը լրանալու փաստով, ինչը հիմնավորվում և պատճառաբանվում է հետևյալ կերպ.

Օրենքի 39.2 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *3. Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց երկու տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման: Կարգապահական վարույթ հարուցելու օրվանից սույն մասով նախատեսված վաղեմության ժամկետը կասեցվում է:*

Օրենքի 39.9 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *1. Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝*

(...)

5) անցել են սույն օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետները, եթե փաստաբանը համաձայն է վարույթի կարճմանը նշված հիմքով:

Մեջբերված իրավակարգավորումների հաշվառմամբ Հանձնաժողովն

արձանագրում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման և/կամ իրականացման և/կամ ըստ էության լուծման համար օրենսդիրը սահմանել է վաղեմության ժամկետ, որի լրանալը հիմք է կարգապահական վարույթ չհարուցելու, իսկ հարուցման դեպքում՝ կարգապահական վարույթը կարճելու համար՝ վերջին դեպքում պարտադիր համարելով վարույթի մասնակից փաստաբանի համաձայնության առկայությունը:

Վերոնշյալ վաղեմության ժամկետը վեց ամիս է՝ հաշվարկված կարգապահական վարույթի հարուցման հիմքի, այն է՝ ենթադրյալ կարգապահական խախտման հայտնաբերման պահից, բայց բոլոր դեպքերում ոչ ավելի, քան երկու տարի՝ կարգապահական վարույթի հարուցման հիմքի ծագման, այն է՝ ենթադրյալ կարգապահական խախտման կատարման պահից՝ այս դեպքում չկարևորելով հայտնաբերման պահը:

Վերոգրյալը համադրելով սույն գործի փաստերի հետ ու միաժամանակ հաշվի առնելով ինչպես Փաստաբանի անմեղության կանխավարկածը, այնպես էլ նիստում արտահայտված նրա համաձայնությունը՝ կարգապահական վարույթը վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով կարճելու մասին՝ Հանձնաժողովը, չքննարկելով Փաստաբանի վարքագծում կարգապահական խախտման առկայությունը, այսինքն՝ չհաստատելով և/կամ չհերքելով դա, արձանագրում է, որ սույն կարգապահական գործի նյութերից, մասնավորապես՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում խնդրո առարկա գործի մասով հասանելի և սույն վարույթի նյութերում առկա տվյալներից հետևում է, որ խնդրո առարկա գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացվել է 2025 թվականի փետրվարի 24-ին, ինչն ընդունել են նաև կողմերը՝ հաստատելով նաև, որ այդ որոշման կայացմամբ 2025 թվականի փետրվարի 25-ից ավարտվել է դատավարական այն փուլը, որի ընթացքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է քաղաքացիական գործերով հայցային վաղեմության կիրառման միջնորդության ներկայացումը:

Ընդ որում, Դիմող կողմն ի պատասխան Հանձնաժողովի անդամ Միքայել Դանիելյանի հարցին՝ նիստի ընթացքում նշել է, որ ենթադրյալ խախտման օրը 2025 թվականի փետրվարի 25-ն է, իսկ այն հարցին, թե այդ պայմաններում ի՞նչ հիմքով ու հիմնավորմամբ է Դիմող կողմը գտնում, որ Օրենքով սահմանված վաղեմության ժամկետը սույն կարգապահական գործով լրացած չէ՝ Դիմող կողմը որևէ դիրքորոշում չի հայտնել, այդ թվում նաև՝ չի փաստարկել ու ապացուցել, որ ենթադրյալ կարգապահական խախտման մասին տեղեկացել (հայտնաբերել) է ավելի ուշ, քան 2025 թվականի փետրվարի 25-ը՝ չնշելով ու չապացուցելով ավելի ուշ տեղեկանալու կոնկրետ պահը, հանգամանքներն ու մանրամասները:

Նման պայմաններում Հանձնաժողովն ինչպես ինքնին, այնպես էլ կիրառելով չփարատված կասկածները Փաստաբանի օգտին մեկնաբանելու անմեղության կանխավարկածից ածանցվող մոտեցումը, որպես Փաստաբանի ենթադրյալ կարգապահական խախտման հայտնաբերման օր է համարում 2025 թվականի փետրվարի 25-ը, որպիսի պայմաններում Օրենքի 39.2 հոդվածի 3-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետն ավարտվել է 2025 թվականի օգոստոսի 25-ին, ուստի հաշվի առնելով, որ Դիմողը Պալատին դիմել է 2025 թվականի հոկտեմբերի 09-

ին, իսկ կարգապահական վարույթն իր հերթին հարուցվել է 2025 թվականի նոյեմբերի 07-ին՝ Հանձնաժողովը գտնում է, որ Օրենքի 39.2 հոդվածի 3-րդ մասով սահմանված վաղեմության ժամկետը սույն կարգապահական գործով լրացել է, ինչը, հաշվի առնելով Փաստաբանի կողմից նիստով արտահայտված համաձայնությունը, Հանձնաժողովը գնահատում է որպես սույն կարգապահական վարույթի կարճման անհրաժեշտ ու բավարար հիմք՝ վաղեմության ժամկետը լրացած լինելու հիմքով:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով նաև Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39-րդ հոդվածով, 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, նույն հոդվածի 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Հասմիկ Եղնիկի Մարտիրոսյանի (արտոնագիր՝ թիվ 1484) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-25088 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-25088-2-Ա
11 փետրվարի 2026թ.
ք.Երևան